Տաշիրի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարում՝ բաց դասական աճուրդի միջոցով

28.04.2021

Տիպ՝ Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հայտատու՝ Տաշիրի համայնքապետարան
,, Հրապարակային սակարկությունների մասին,, ՀՀ օրենքի 5-րդ հոդված

2021թ. մայիսի 31-ին, ժամը 11-30 ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանում՝ Վ.Սարգսյան փողոց, թիվ 94 հասցեում, կայանալու է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարում՝ բաց դասական աճուրդի միջոցով:
Աճուրդի է դրվում հետևյալ լոտը՝
Լոտ 1 ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, թաղամաս 6, Էրեբունի փողոց, թիվ 1/2 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման 49,26քմ մակերեսով 06-008-0206-0061 կադաստրային ծածկագրով հողամասը 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ մեկնարկային գնով:
Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան, նրա օգտագործումը սերվիտուտ չի առաջացնում, այն հարում է հաղորդակցության ուղիներին:
Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.
ա) հայտ,
բ) աճուրդին մասնակցության համար սահմանված դրամի չափով վճարի անդորրագիր,
գ) անձնագիր, իրավաբանական անձանց համար հիմնադիր փաստաթղթերը:
Հայտերի ընդունման վերջնաժամկետն է սույն թվականի մայիսի 27-ը: Վաճառվելիք լոտին մասնակիցները կարող են ծանոթանալ մինչև աճուրդի բացման նախորդող օրը՝ յուրաքանչյուր երեքշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-17:00 ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի): Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը համարվում է աճուրդում հաղթած մասնակից:
Նախավճարի չափը մեկնարկային գնի 5 % չափով, աճուրդի մասնակցության վճարը 2000 դրամ:
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Տաշիրի համայնքապետարան (0254) 2-29-31,
2-34-06 հեռախոսահամարներով:

Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, քաղաք Տաշիր Վ. Սարգսյան 94

Հեռ..՝ +37425422168,025423406

Վեբ կայք՝ tashircity.am

Էլ. փոստ՝ tashirhamaynq@bk.ru